

դաքսականութիւն կը վարէ, այլ անոր համար, որ Դաշնակցութիւնը ատեն մը միացած էր Իթթիհատին»...

Հայ Արուեստի Տան եւ Հայ Թատերական Միութեան իր նախագահութիւնը անուանական էր լուր: Այդպէս էր նաեւ Հայ Խմբագիրներու Միութեան իր նախագահութիւնը: Բայց օր մը ամենալուր կ'ըսէր ինծի, թէ Պոլսէն դուրամ եկած է իրեն իբրեւ իր բաժինը Հայ Խմբագիրներու Միութեան գանձէն:

Ամենալիք կէտը հոն էր որ այդ Միութիւնը, Իգմիրի գէպէն առաջ, ներկայացում մը սարքեր էր ի նպաստ Միութեան, ու կ'ըսէր իր գումար մը ներս նետել: Այդ գումարը յետոյ բաշխուեցաւ Միութեան անդամ եղող խմբագիրներուն...

Երեսփ. Ժողովին մէջ Օտեան կը ներկայացնէր Ղալաթիան ու Պէյքօզը: Ու օր մը կը պատմէր, թէ Ժողովուրդը ինչպէս կը գնահատէ իր ներկայացուցիչները: Ընկերներու հետ Վոսիորի վրայ նաւակով շրջագայութեան մը ատեն խօսքի կը բռնուին նաւավարին հետ, — Պէյքօզցի հայ մը, որուն կը հարցնէ մէկը.

«Կը ճանչնա՞ս ձեր թաղին երեսփոխանը»:

«Ո՞վ գիտէ ո՛ր...ն է», — կը պատասխանէ նաւավարը՝ ոչ-վաղաքէական ածական մը տալով:

Վերջին տարիներուն Օտեանի մէջ աւելի չեշտուած էր պահպանողական գիծը: Հայկական շարժումը սխալ եւ անտրամաբանական կը գտնէր իր հիմէն իսկ: Ու պատասխանատու կը նկատէր հայ Ժողովուրդը բողոքի, պայքարի մղողները, հարց ստեղծողները: Ու պատասխանատուներուն մէջ կը դասէր իր հօրեղբայրն ալ, Գրիգոր Օտեանը, որ հայ Ժողովուրդը արթնցնելու գործին մասնակցած էր ոգեւին:

ԻՐ ԳՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Դիւրին արտադրող մըն էր Օտեան: Վարժութիւն մը եղած էր իրեն զրելը, նոյնիսկ ամենէն դժուար նիւթերու վրայ: Դիւրին բան էր քանի մը գրաշար կ'շտացնէր, քանի մը թերթի գրաշար մէկէն:

Ու կը գրէր առանց նօթի, մաքին մէջ միայն շինած յատակագիծը: Նոյնիսկ յաճախ այդպէս կը գրէր երկար վէպերն ալ, մանա-

ւանդ անոնք զորս օրը օրին կուտար իբր թերթօն, երբեմն մոռնալով նոյնիսկ նախապէս գրածը: Կը պատահէր յաճախ, որ ամիսներ անցնելէն յետոյ կը չգիտէր իր հերոսները, անոնց ողջ կամ մեռած ըլլալը: Ու չմոռնանք, որ իր վէպերէն ոմանք տարիէն աւելի կը տեւէին, որովհետեւ արտօնատէրը չէր ուզեր որ աւարտին անոնք:

Իր գրածը չէր ալ սրբագրեր. կը գրէր կամայ, հատիկ հատիկ, բայց անգամ մը գրելէն յետոյ սրբագրութիւն չէր ընել վրան:

Օտեան իր սրամտութիւնները կը գրէր առանց ճիշդի: Բայց կը խորչէր բառախաղ ընելէ: Բառախաղ ընողները խենթի տեղ կը դնէր նոյնիսկ: Այդ առթիւ յաճախ կը հեգնէր Երուանդ Գօլանճեանը, որ կը սիրէր բառախաղ ընել ամէն քայլափոխի:

Օտեան իր նիւթը կը գրէր միտքը եկածին պէս, առանց երկար բարակ մտածելու: Իրեն պատմուած գէպը մը նիւթ կ'ընէր անմիջապէս, առանց գէպը քննելու, առանց նոյնիսկ ստուգած ըլլալու ճշտութիւնը անոր: Ատոր համար անպակաս կ'ըլլային հերքումներն ալ, զորս կը տպէր առանց տհաճութեան:

Իր ստորագրութեան նախանձախնդրութիւնը կը պակէր իրեն վերջին տարիները: Փանջունին ստեղծող Օտեանը կը ստորագրէր ամենէն հասարակ նիւթերու տակ իսկ, նոյնիսկ ամենապարզ թղթակցութիւնները: Ապրելու համար գրելու ստիպուած արուեստագէտ մը չի կրնար շատ բժախնդիր ըլլալ: Մանաւանդ որ թերթերը յաճախ ստորագրութիւնն է որ ծախու կ'առնեն աւելի քան նիւթը:

Պատահեր է որ, — թող իր յիշատակը ներէ՛ այս անգաղտնապահութեանս, — ես եմ գրեր իր թղթակցութիւններէն ոմանք, երբ հիւանդ պառկած էր հիւանդանոցը:

ԻՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Օտեան իր նկարագրին մէջ շատ աղուոր գիծեր ունէր:

Նախ ֆօրէք էր իր մէջ մարդը: Նիւթական հաշիւներ երբեք չէին չփոթեցներ զինքը: Երբեք չփորձեց չահագործել իր տաղանդը եւ ազդեցութիւնը: Չէր սիրեր վշտացնել մէկը, եթէ նոյնիսկ դաշն հեգնել պէտք ըլլար: Բայց հեգնութիւնը մինչեւ կիրքի չէր հասցնէր ան: